Եղիշե Չարենց

Երկիր Նաիրի

4

Կամ այստեղ, նպարավաճառի կողքին, աղյուսե բավականին ընդարձակ խանութ է ահա, մեծ, ապակեպատ դռներով, նույնիսկ վիտրին ունի, ուր շարված են՝ տղամարդու եւ կանացի պատրաստի կոստյումներ, սանրեր, մկրատներ, արտասահմանյան օծանելիքներ: Իսկ ցուցանա՞կը. Փարիզից է բերված.- սեւ ֆոնի վրա ոսկեզօծ տառերով գրված է ֆրանսերեն՝ «A bon marche»: Տերը՝ երեսունն անց սափրված եվրոպացի է՝ պենսնեն նաիրյան քթին, անբեղ-անմորուք. դերասան է ասես, որ զբաղվում է առեւտրով: Նրան անվանում են քաղաքում -պ. Աբոմարշ:

Աբոմարշի հարեւանը սափրիչ է. չէ, եվրոպական վարսավիր, ինչպես հայտարարված է նրա ցուցանակի վրա: Անունն է պ. Վասիլ: Միջահասակ է, լայնաթիկունք. չիլ այտեր ունի, դեղին մորուք: Սիրում է ածիլելիս շրթունքներն այնքան մոտեցնել սափրվողի դեմքին, որ նրա մասին քաղաքում պատմում են զանազան առասպելներ:

Նրա հարեւանը -կոշկակար է, հայտնի է քաղաքում, որպես սքանչելի «կինտաուրի» պարող: Բարեկենդանի հինգշաբթի երեկոները, երբ քաղաքի ակումբում, որ մի փոքր բեմական հարմարություն ունի, որեւէ եկվոր մի դերասան տեղական սիրողների հետ խաղում է «Վարդանանց Պատերազմը»- բոլորը գնում են ակումբ ո՛չ այնքան «Վարդանանց Պատերազմը», որքան կոշկակար Սիմոնի «կինտաուրին» տեսնելու: Բոլորը սիրում են նրան, բացի վարսավիր

Վասիլից, որ չարախնդաբար անվանում է նրան կամ «կինտաուրի Սիմոն», որ դեռ էլի ոչինչ,- կամ... «Կլուբի մեյմուն».- կատարյալ խայտառակություն:

Բայց ամենից հետաքրքիրը կոշկակարի հարեւանն է՝ պարսկաստանցի մի վաճառական, որ զբաղվում է գորգի, քիշմիշի, մորթեղենի եւ շաքարի առեւտուրով: Եթե խանութը մտնեք՝ կտեսնեք.- գորգեր, գորգեր, գորգեր՝ հին, փոշոտ, զանազան: Աղվեսի, սանսարի, վագրի ու արջի մորթիներ: Պարկերով իրար վրա դարսած շաքար: Արկղերով քիշմիշ: Մեծ խանութ է. Պարսկաստանի եւ Եվրոպայի հետ առեւտրական կապեր ունի:

Հարեւան խանութը -մեզ արդեն բավականին ծանոթ Ղահվեճի Սեթոյի խանութն է, ուր նա չոր սուրճ է ծախում: Ինչպես այս խանութը, այնպես էլ իրան՝ Ղահվեճի Սեթոյին չպետք է շփոթել Տելեֆոն Սեթոյի եւ նրա այն հայտնի սրճարանի հետ, որը գտնվում է մի քանի խանութ այն կողմը, եւ որի ցուցանակի վրա, ինչպես ասված է արդեն, գրված է՝ «Չայ, Ղահվե, Ճաշարան, Սեթրակ Ֆալիան»: Չնայած որ երկուսի էլ անունը Սեթո է եւ երկուսն էլ գործ ունեն սուրճի հետ, սակայն մեկը չոր սուրճ ծախող է, իսկ մյուսը -սրճարանատեր: Բացի այս,- չհաշված այս երկու արգո նահրցիների հիշյալ զուտ-- պրոֆեսիոնալ տարբերությանը՝ նրանց մեջ կա եւ, եթե կարելի է այսպես ասել, անձնական տարբերություն.-Ղահվեճի Սեթոն միջահասակ է, գիրուկ, անբեղ-անմիրուք, թորշոմած դեմք ունի, ներքինու կերպարանք.- այնինչ Տելեֆոն Սեթոն չոր է, բարձրահասակ, գլուխը ֆեսի է նման, չոր բեղեր ունի, ցանցառ միրուք. այծի կերպարանք: Եվ, վերջապես, տարբեր է այս երկուսի, այսպես ասած՝ հասարակական դիրքը.- Ղահվեճի Սեթոյի խանութը -աննշան մի որջ է, մի ողորմելի անկյուն, ուր մկները միայն կարող են հավաքվել, եթե միայն նրանք, այսինքն՝ մկները, ընդհանրապես կարող են հետաքրքրվել չոր սուրճով,- այնինչ Տելեֆոն Սեթոյի սրճարան-ճաշարանը, թեկուզ եւ «ճաշարան» բառը զուր տեղն է տեղ գրավել նրա ցուցանակի վրա, քանի որ այդտեղ ոչինչ էլ չի տրվում, բացի սուրճից ու թեյից,-բայց, չնայած դրան, այդ սրրճարանը նույնն է քաղաքի ցածր խավերի համար, ինչ որ է վերին խավերի համար Մազութի Համոյի գրասենյակը.- քաղաքական ակումբ է, կատարյալ ակումբ:

Հաջորդ խանութը... Այդտեղ Հաջի Էֆենդի Մանուկոֆը մանուֆակտուրա է ծախում, այսինքն՝ Սամարղանդի փուշիներ, զանազան կերպասեղեն (չիթ, յազմա, չլվարի), «բրոցկի» շաքար, «լապշինի» լուցկի: Միեւնույն ժամանակ սարաֆություն էլ է անում. անգլիերեն գիտե. եւ որպես միակը քաղաքում՝ վայելում է քաղաքացիների առանձին հարգանքը: Կատաղի հայասեր է Հաճի Օնիկ Մանուկոֆ էֆենդին, ինչպես իրեն սիրում է հորջորջել հենց ինքը՝ այդ հայտնի հայասերը:

Խանութները շատ են, բոլորը հո չի՞ կարելի թվել. մենք պատահմամբ մի քանիսի մասին միայն երկու խոսք ասացինք: Մնացածների մասին թող նրանց ցուցանակներն ասեն՝ ճիշտ այն հերթով, ինչ հերթով որ շարված են նրանք Լորիս-Մելիքյան փողոցի մի ծայրից մյուս ծայրը՝ մինչեւ կայարան:

«Մանրուքի խանութ. Պողոս Կոլոպոտյան»- «Գինի, արաղ, կոնյակ. Համբարձումով Նիկոլայ» (սա իր բավականին ընդարձակ փորի պատճառով քաղաքում կոչվում է Բոչկա Նիկոլայ)-«Դագաղագործ. ընդունում եմ պատվերներ. Ենոք Կարապետյան» (սա հենց ինքն է՝ Մեռելի Ենոքը)-«Ճաշարան Եվրոպա». Եգոռ Արզումանով -եւ էլի մանրավաճառ, կոշկակար, մանրավաճառ, վարսավիր, մանրավաճառ, մանրավաճառ եւ հանկարծ -«Դեղատուն Ժգենտի» -ու էլի՝ մանրավաճառ, ու էլի՝ մանր, մունր խանութներ -մինչեւ կայարան:

Կանուխ, մութլուսուն, բացվում են խանութներն իրար հետեւից -ու ծույլ, դանդաղ, միապաղաղ՝ սկսվում է քաղաքի գործնական եռուզեռը՝ գործնական առօրյան:

Սովորաբար առավոտվա այդ վաղ պահերին մայթերը բավականին դատարկ են լինում, այնինչ փողոցի մեջտեղով, խուռն ու բազմերանգ, հոսում են բավականին ստվար բազմություններ: Անցնում են փողոցի մեջտեղով՝ սայլեր, ոչխարի եւ տնային այլ անասունների բազմագլուխ նախիրներ, մշակներ, որ մեծ խմբերով գնում են քաղաքից դուրս՝ երկաթուղագծի վրա աշխատելու, գյուղացիներ, որ գյուղական այլ եւ այլ բարիքներ են բերում քաղաքում վաճառելու: Սայլերի, նախիրների եւ գյուղացիների այդ խուռներամ հոսանքը հոսում է Լորիս-Մելիքյան փողոցի մեջտեղով դեպի մեյդանը, այսինքն՝ շուկան, որ գտնվում է փողոցի եւ կայարանի մեջտեղն ընկնող այն դաշտանման տեղում, որ

տեղացիների լեզվով կոչվում է «գյոլ» կամ «լիճ», որովհետեւ գարնան սկզբին այդտեղ է հավաքվում բլուրներից հոսող ջուրը, որը եւ մնում է այդտեղ լճացած, մինչեւ որ չորանա: Անցնում են, անցնում են. առավոտները հաճախ մշուշ է լինում,-ու մշուշի միջից դանդաղ առաջացող, կարծես մշուշից ելնող սայլերից, նախիրներից ու գյուղացիներից կազմված հորդածուփ այդ հոսանքը արժանանում է իրենց խանութների առաջ նստած կամ կանգնած գնորդի սպասող խանութպանների զանազան նկատողություններին: Պետք է ասել, որ առավոտվա այդ կանուխ պահերին, երբ գյուղերից եկած հոսանքը դեպի մեյդան է շտապում, փողոցի երկու կողմը շարված խանութները շատ չնչին ուշադրության են արժանանում դեպի մեյդան շտապող գյուղացիների կողմից. վերջը, կեսօրից հետո, երբ իր բարիքը ծախած գյուղացին՝ ետ դեպի գյուղ է շտապում նույն Լորիս-Մելիքյան փողոցով -այս անգամ ոչ թե մեջտեղով, ինչպես այդ վայել է սայլերին ու նախիրներին, այլ մայթերի վրայով,- այդ ժամանակ միայն եռում, կատաղի ճակատամարտի տեսք է ստանում մանրուքի խանութների առեւտուրը: Իսկ մինչ այդ, մանավանդ առավոտյան այդ վաղ պահերին, երբ նոր է սկսվում գյուղացիների հոսանքը դեպի մեյդան,- նաիրցի խանութպանները խաղաղ նստած են լինում իրենց խանութների առաջ եւ փողոցի մեջտեղով դանդաղ առաջացող եռուզեռին նայելով՝ հաղորդում են իրար իրենց պատահական մտքերն ու տպավորությունները: Օրինակ.-«Ան օչխարը, նայե՛. մեկ-մեկ փութ դմակ կախված է հետվեն»,- ասում է Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆը Ղահվեճի Սեթոյին: «Ես յաղլու մը կլլած եմ առտուս»,- տեղի-անտեղի պատասխանում է դահվեճին, ինչպես երեւում է, բոլորովին տարբեր տրամադրություններով տարված: Եվ Հաջի Օնիկ էֆենդին, միանգամայն բավարարված այդպիսի մի պատասխանով, լռում է խորհրդավոր եւ շարունակում է նայել փողոցով անցնող սպիտակ ոչխարների ծանր դմակներին: Ղահվեճին, որ ընդհանրապես սիրում է խոսակցությունը, ուզում է զրույց սկսել քաղաքի նորությունների մասին, բայց Հաջին, նկատելով փողոցի ծայրից առաջացող իր երեխային, որ ամեն առավոտ իր համար հաց ու պանիր է բերում տնից (շաքար խանութում կա)- մտնում է իր խանութը թեյելու: Ղահվեճին, մենակ մնալով, մտածում է ինքն էլ մտնի իր խանութը թեյելու, բայց այդ պահուն կոշկակար Սիմոնը դուրս է ելնում խանութից եւ ձեռքը մեկնելով նրան՝ «Բարի լույս, պ. Սեդրակ»,- ասում է քաղաքավարի: «Գիշերս լա՞վ ես քնե»,- հարցնում է կոշկակար Սիմոնը, եւ միակն է քաղաքում, որ »պ. Սեդրակ» է անվանում

Ղահվեճի Սեթոյին: Ուստի եւ այս վերջին հանգամանքից չափազանց զգացված՝ «Աղեկ եմ», - պատասխանում է ժպտալով ղահվեճի Սեթոն. «Առավոտ յաղլու մը կլլած եմ, ըստ սովորության»:-- «Անուշներ»,-- կտրուկ կըտրում է Սիմոնը եւ նորից մտնում է խանութը՝ թողնելով անուշ հիացմունքի մեջ Ղահվեճի Սեթոյին: «Ի՞նչ կըսեր էլի կլուբի մեյմունը»,- յուղոտ ժպիտը դեմքին, դանդաղ մոտենալով, հարցնում է վարսավիր Վասիլը: «Գործ չկա»,-պատասխանում է հորանջելով Ղահվեճի Սեթոն, եւ երկուսը միասին, տխուր-տխուր աչքերով, սկսում են նայել փողոցի մեջտեղով անցնող անասուններին ու գյուղացիներին: «Ես չեմ հասկնար, թե դուն ինչո՞ւ չես հարգեր սաբոժնիկ Սիմոնը»,- ասում է ղահվեճին. «Ես անոր ոտքերը ունենայի նե- հիմա սանկ թխլիկ կնիկ մը տունս նստած կլլար. սատանայի պես կպարե շանորդին...»: «Չի ըսե մեյմունի պես, կըսե սատանայի»,- լինում է վարսավիրի կտրուկ պատասխանը: Ղահվեճին վիրավորվում է իր մեջ, բայց վախենում է վարսավիրի հեգնող լեզվից եւ ոչ մի բառով կամ ակնարկով չի արտահայտում իր դժգոհությունը: «Ի՞նչ կըհասկնա այդ աղտոտ ուշաղբազը»,- հայհոյում է մտքում վիրավորված ղահվեճին եւ մի վախլուկ ժպիտ սահեցնելով դեմքին՝ մտնում է խանութը: Եվ այս պատմությունը կրկնվում է ամեն օր համարյա, ամեն առավոտ: «Վատ, չարախոս լեզու ունի ուշաղբազ պերպերը»,- մտածում է, խանութի մի անկյունը նստած, Ղահվեճի Սեթոն:

Արեւը կամաց-կամաց սկսում է բարձրանալ եւ ահա մյուս, ոչ խանութպան, քաղաքացիները եւս ելնում են տներից եւ մայթերի վրայով գնում են՝ մի մասը «պրովիզ» գնելու, մի մասը -գործի: Պաշտոնյաները շտապում են պաշտոնատեղի, պ. Մարուքեն շտապում է դպրոց: Խանութներում գործը հետզհետե սկսում է եռալ եւ գուցե միայն դագաղագործը եւ «Եվրոպա» ճաշարանի տնօրեն Եգոռ Արզումանովն են հիմա անգործ նստած իրենց խանութների առաջ, ձանձրույթից հորանջում: Սակայն նրանք էլ կամաց-կամաց սկսում են զբաղվել. դագաղագործը ձանձրույթից ձանձրացած՝ սկսում է թղթե արծաթազօծ հրեշտակներ կպցնել դագաղների վրա, իսկ Դուքանչի Եգոռը, իր բավականին մաքուր սրբիչը վերցնելով, սկսում է ճաշարանի սեղանները սրբել: Սրբում, սրբում է Դուքանչի Եգոռը եւ շվվացնելով «Վասադուլի» ռուսական երգը, մտածում է, որ հարկավոր է մի մեծ քաղաք տեղափոխվել -Ռաստով կամ Կատինդար -եւ այնտեղ կարգին «ստալավո» պահել: Եվ հանկարծ, ինքն էլ

չգիտե ինչու, հիշում է, որ Ղահվեճի Սեթոն մի անգամ բարեկենդանին մի ֆունտ լվացքի սապոն միանգամից կերավ՝ տասը ռուբլի գրազի համար: «Թյո՛ւ քու գալած ճամփեն...»,- զզվանքով հայհոյում է Եգոռ Արզումանովը եւ սրբիչը մի կողմ նետելով՝ ելնում է փողոց:

Այդ նույն վայրկյանին պ. Մարուքեն մտնում է վարսավիր Վասիլի վարսավիրանոցը՝ ածիլվելու: Ամեն օր դպրոց գնալուց առաջ անպայման ածիլվում է պ. Մարուքեն: Ահա թե ինչու վարսավիր Վասիլը մի առանձին հարգանք է տածում դեպի պ. Մարուքեն. ածիլելիս այնքան է մոտեցնում իր արաղահոտ շրթունքները պ. Մարուքեի այտերին, որ միանգամայն հավանական է դարձնում Ղահվեճի Սեթոյի կասկածները վարսավիրի բարոյականի նկատմամբ: Պ. Մարուքեն, իհարկե, երիտասարդ չէ, երեսուն-երեսուներկու տարեկան կլինի -թեպետ, մյուս կողմից՝ դեմքը թուխ է, հաճախ սափրվելուց եւ պուդրա գործածելուց այտերը հաճելի քնքշություն են ստացել, իսկ քթի ծայրը համարյա միշտ կարմրած է լինում հարբուխից կամ օղուց:

«Խորին հարգանքներս պ. Մարուքեին»,- ասում է վարսավիր Վասիլը, գլուխ տալով, երբ պ. Մարուքեն մտնում է ներս: Պ. Մարուքեն թեթեւ գլխով է անում եւ լուրջ, սփրթնած դեմքով նստում է հայելու առաջ: Աչքերը փակում ու, ծույլ, փափկաթոռի մեջ ընկղմած, սպասում է, մինչեւ տաք, կակուղ խոզանակը սապոնոտ սահելով՝ քսվի դեմքին եւ իր այտերի վրա շոգ, տաք՝ զգա վարսավիր Վասիլի արաղահամ շնչառությունը: «Զգուշ»,- բարկացած վեր է թռչում պ. Մարուքեն, երբ վարսավիրի տաք շրթունքները համարյա քսվում են նրա դեմքին: «Ինչ գռեհիկ են այստեղի վարսավիրները»,- տխուր մտածում է պ. Մարուքեն: «Ուրիշ բան է, օրինակ, եվրոպական քաղաքներում՝ կամ, թեկուզ, Ռուսաստանում. այնտեղ մարդիկ քաղաքավարի, մաքուր են ավելի, այնպես են ածիլվում, որ հաճույք ես զգում: Իսկ պ. Վասիլը... Նու, քիչ է մնում բերանդ մտնի. հիմար, գռեհիկ նահրցի...»:

«Անուշներ»,- ասում է պ. Վասիլը, երբ, մազերը սանրելուց հետո, սպիտակ սրբիչով մաքրում է պ. Մարուքեի դեմքի պուդրան եւ խոզանակով սկսում է նրա օձիքը մաքրել: «Էսօր աչքիս քիչ տխուր կերեւաս, ի՞նչ է պատահե»,- հարցնում է վարսավիր Վասիլը՝ խորամանկ ժպտալով:-«Առանձին բան չկա»,-խռպոտ,

լուրջ ձայնով պատասխանում է պ. Մարուքեն եւ գլխարկը վերցնելով՝ շտապում է դպրոց:

Մարդիկ անցնում են դանդաղ, անշտապ անցնում են մարդիկ, կանայք, երեխաներ -ելել են փողոց, որ գնան՝ պաշտոնի, գնումներ անելու, բաղանիք, գործի: Բաղանիք, ասենք, առավոտվա վաղ ժամերին միայն կանայք են գնում նաիրյան այդ փոքրիկ քաղաքում. քաղաքում կա միայն երկու բաղանիք, երկուսն էլ ասիական, թեկուզ մեկի անունն է «Ճերմակ», որովհետեւ նրա պատերը սպիտակացրած են կիրով,- իսկ մյուսը, որ մեչեթի նման ձմերուկաձեւ գմբեթ ունի, կոչվում է «Ֆանտազիա բաղանիք- առանձին համարներով»: Ընդամենը երկու համար ունի այդ եվրոպականացրած բաղանիքը, բայց դրությունը դրանից, իհարկե, չի փոխվում. համարներում գնում են լողանալու քաղաքացիներից միմիայն -առաջին քաղաքամասի պրիստավը, նրա կինը, աղջիկները, էլի մի քանի պաշտոնյա ռուսներ եւ մեկ էլ հայտնի մանուֆակտուրիստ Հաջի Օնիկ աղա Մանուկոֆը. նա էլ, լինելով հմուտ անգլիագետ, համարները գերադասում է ընդհանուր լողարանից:-«Ինչ կընես ըրե- մարդ չի տեսնար»,-ասում է նա այդ առթիվ, թեկուզ մեզ արդեն ծանոթ դահվեճի Սիմոնը նրա մասին էլ, ինչպես եւ վարսավիր Վասիլի մասին, ունի առանձին կարծիք: «Հաջի Օնիկ աղան չի ուզեր հարեւանները տեսնեն, որ ինքը դեղին սապոնով կլողանա»,- ասում է նա:

Առավոտվա այդ վաղ պահերին բաղանիք են գնում, ինչպես ասացինք, բացառապես կանայք, որովհետեւ քաղաքում գտնվող երկու բաղանիքներն էլ, առանց բացառության, մինչեւ ցերեկվա ժամը չորսը բաց են կանանց, իսկ չորսից հետո -տղամարդկանց համար: Բաղանիք այդ քաղաքում կանայք գնում են առանձին մի շուքով, կարծես գնում են ծիսակատարության: Գնում են, ընդհանրապես, մի քանի ազգական -կանայք, աղջիկներ եւ երեխաներ միասին. մենակ ընդունված չէ բաղանիք գնալ նաիրյան այդ քաղաքում: Առջեւից, գնացքի ավանգարդը կազմելով, գնում է սովորաբար զզգզված մի մշակ՝ շալակին պղնձե մի մեծ ջրաման, որի մեջ դրված են լինում պղնձե կլոր թասեր, փայտե նալքններ, սանր, սապոն -մի խոսքով՝ լողանալու զանազան պարագաներ: Եթե ընտանիքում ծծկեր երեխա է լինում -նրան էլ սովորաբար գրկում է նույն մշակը, որի երկու կողքից հաղթական քայլերով արշավում են երեխաները, տղաներ ու աղջիկներ, տղաները -մինչեւ յոթը տարեկան, իսկ աղջիկների համար տարիքը

նշանակություն չունի: Երեխաների համար առանձին օրենք է ընդունված նահիրյան բաղանիքներում. ընդունված է կանանց հետ բաղանիք թողնել մինչեւ յոթը տարեկան տղաների, բայց եթե ընտանիքում, որ բաղանիք է գնում, հիվանդ է տասնեւմեկ տարեկան մի տղա -նրան էլ մայրն իրավունք ունի հետը բաղանիք տանելու. հո չի՞ կարող հիվանդ երեխան տանն սպասել եւ անլվա մնալ: Այսպիսի բաղանիքային կարգեր կան, հնուց մնացած, նահիրյան այդ քաղաքում:

Եթե ամառ է, աշուն, մի խոսքով -մրգի ժամանակ՝ բաղանիք գնացող ընտանիքի հայրը, լինի նա վարսավիր Վասիլը, թե Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆը, կամ Դուքանչի Եգոռը -ցերեկվա տասներկուսին մոտիկ պետք է բաղանիք ուղարկե, լողացող ընտանիքին նվեր՝ ձմերուկ, սեխ, խաղող, եւ դա սովորաբար արվում է հրապարակավ, բոլորին ի տես, մանավանդ երբ բաղանիք է գնացած լինում Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆի հանըմը՝ երեխաներով հանդերձ: «Էսօր էլի Հաջին բաղանիք է ղրկե Նունուֆար հանըմին»,-ասում են հարեւանները քմծիծաղ: «Խեյր էղնի»,- ասում է այդպիսի օրերին Եգոռ Համբարձումովը, «Եվրոպա» ճաշարանի տերը, Հաջի Օնիկին. «Էսօր Հաջին մեզ մոտ պիտի ճաշե. լավ բոզբաշ եմ շինել տվե, իսկական դամաշնի՝ պամիդորով ու սոխով»: Բայց հաջին չի սիրում ընտանիքից դուրս- ճաշարաններում ճաշել. երբ տնից ճաշ չեն ուղարկում, նա յոլա է գնում հացով ու պանիրով, իսկ եթե մրգի ժամանակ է՝ սիրում է ձմերուկ կամ սեխ ունենալ մսի փոխարեն: «Շատ բան պետք չէ մարդու մը կշտացնելու համար»,- մտածում է Հաջին. «Անգլեթերում լորտերը սեւ հացով կբավականանան. սակայն այդ հանգամանքը չի խանգարեր անոնց, որ անոնք ըլլան ազնիվ ու հայրենասեր»:- Եվ հարեւանները, չնայած որ բնավ չեն էլ մտածում հավատալ, որ լորդերը Անգլեթերում սեւ հաց են ուտում,- այնուամենայնիվ հավանություն են տալիս Հաջու խոսքերին: «Մարդս ինչով ասես կարող է կշտանալ, մանավանդ Հաջի Օնիկ էֆենդին»,-մտածում են նրանք:

Երբ արեւը բավականին բարձրանում է վեր եւ կեսօրից սկսում է դեպի արեւմուտք թեքվել, Լորիս-- Մելիքյան փողոցի վրա գտնվող խանութներում գործնական եռուզեռը հասնում է իր գագաթնակետին.- Հաջին շուկայից վերադարձող գյուղացիներին մանուֆակտուրա, շաքար, փոշիներ է ծախում, վարսավիր Վասիլը սափրում է ու խուզում: «Եվրոպա» ճաշարանում բորշչ են սկսում ուտել զինվորներն ու գյուղացիները, իսկ մանրավաճառները շունչ քաշելու

անգամ ժամանակ չեն ունենում: Ասեղ, թել, կողպեք, քառորդ ֆ. սպիտակ հալվա, ֆուրգոնի մազութ, Լապշինի լուցկի,- գնում են, գնում են, ում ինչ հարկավոր է օրվա համար, եւ ծախում ու հարստանում են -Կոլոպոտյանը, Զարգար Հովհաննեսի տղան, որ հիմա մանրուքի խանութ ունի, քաչալ Թաթոսը, կաթոլիկ Սիմոն աղան եւ մնացած չարչիներն ու խանութպանները.- խեղճ Աբոմարշն է միայն, որ անգործ, աչքը խանութի պատերից կախած եվրոպական գույնզգույն հագուստներին հառած, սպասում է գնորդի: Երեւի նաիրցիները չեն հասկանում, որ ինչպես իր ցուցանակի վրա գրված, այնպես էլ իրեն կպցրած ֆրանսերեն «Աբոն մարշ»-ն ոչ այլ ինչ է նշանակում, եթե ոչ -բարի գալուստ,- մտածում է նա:-Եթե այդ հասկանային, գոնե ներս կմտնեին, գնելը դեռ մի կողմ: Պետք է ցուցանակները ռուսերենի վերածել -որոշում է նա մտքում եւ սկսում է իր նոր ցուցանակի համար անուն մտածել:

Տասներկուսից տասը անց՝ երկրորդ դասն արդեն վերջացրած լինելով՝ քաղաքի ծխական դպրոցի ուսուցչանոցում, մեծ դասամիջոցից օգտվելով, նախաճաշ են անում ուսուցիչ- ուսուցչուհիները: Ուսուցիչներից մեկի անունն է Բյուզանդ Վարդերեսյան, երեսունին մոտիկ ճեմարանավարտ փորձված ուսուցիչ Մանուկ Աբեղյանից է սովորել հայերենը եւ պարծենում է դրանով: Մազերը պահում է երկար, սանրում է մեծ խնամքով. թողնում է կարճ մորուք: Դպրոցում պարապում է հայերեն եւ երգ: Միեւնույն ժամանակ դպրոցի տեսուչն է, ավագ ուսուցիչը: Երկրորդ ուսուցիչը -մեզ արդեն ծանոթ պ. Մարուքեն է, դպրոցում նա ավանդում է թվաբանություն եւ ռուսաց լեզու: Երրորդը նույնպես ճեմարանցի է, բայց ավելի է երիտասարդ. սիրում է հասարակական գործունեությամբ զբաղվել եւ միտք ունի հաջորդ ամառվա ընթացքում մեզ արդեն բավականին ծանոթ՝ երկրորդ ծխականի ուսուցիչ ընկ. Վառոդյանի ընկերակցությամբ մի շարք դասախոսություններ կարդալ հայոց պատմության մի քանի հետաքրքիր եւ դաստիարակիչ գլուխների մասին, կազմակերպել երիտասարդական միություն, որի գլխավոր նպատակներից մեկը պիտի լինի «Հայոց լեզուն տարածելու խնդիրը»,-ռուսախոս նաիրցիների շրջանում: Լավ երիտասարդ է պ. Աշոտը եւ լավ մտքեր ունի, բայց դժբախտաբար անտարբեր չէ դեպի իր պաշտոնակցուհի օր. Նվարդ Լուսպարոնյանը, որ Թիֆլիսի հովնանյանավարտներից է եւ պահում է կարճ մազեր: Չորրորդը նույնպես ռուսուցչուհի է, երեսունին մոտիկ մի օրիորդ, օր. Վարդուհի Զատիկյան. վերջացրել է Երեւանի Գայանյան դպրոցը, չի սիրում

օր. Նվարդին եւ ֆիզիկական ատելություն է զգում դեպի նրա կարճ մազերն ու թեթեւամիտ հանաքները: «Կինը պետք է իրեն պահել իմանա»,-ասում է նա՝ հաճախ ակնարկելով օր. Նվարդի հանաքները պ. Մարուքեի հետ, դեպի որը, ասում են, այնքան էլ անտարբեր չէ... ինքը՝ օր. Վարդուհին:

Նրանք նստած են հիմա ուսուցչանոցում, որը շատ լվանալուց խունացած հատակով եւ դեղնած առաստաղով երկպատուհան մի սենյակ է. մեջտեղում՝ կանաչ ծածկոցով, թանաքոտած մի սեղան, պատից կախված է մի մեծ, կայարանների ժամացույցներին նման, կլոր ժամացույց, իսկ երկու պատուհանների մեջտեղում -մի մեծ փայտյա պահարան: Պատուհանները փողոց են նայում. իսկ դուռը միջանցք է դուրս գալիս. բակը, որտեղ խաղում են երեխաները, մնում է հեռու -այդպիսով նրանք այստեղ բավականին ապահովված են իրենց զգում երեխաների աղմուկ-- աղաղակներից. մի հանգամանք, որից շատ դժգոհ է պ. Մարուքեն եւ ավելի քան գոհ է օր. Նվարդը:

Թեյը, դեղին, պաղ, հորանջում է ապակյա բաժակներում. ձանձրալի է. հավաս չկա. թեյ, թեյ, թեյ,- ամեն օր նույնը: Ձանձրալի են օր. Վարդուհու զրույցները կանացի առաքինության մասին -օր. Նվարդին, իսկ օր. Նվարդի տափակ հանաքները օր. Վարդուհու ականջներն ու հոգին տանջում են, բռնաբարում են համարյա, ոչ խոսքն է օգնում, ոչ վրդովմունքը: Պ. Մարուքեն թերթ է կարդում եւ քթի տակ ծիծաղում է օր. Վարդուհու վրա, իսկ երբ լսում է պ. Աշոտի դողդոջուն ձայնը, որով նա խնդրում է օր. Նվարդին մի բաժակ թեյ եւս լցնել -աչքերը բարձրացնում է թերթից եւ պաղ նայում է պաշտոնակցի դեմքին: Իսկ պ. Բյուզանդ Վարդերեսյանը համարյա ամեն օր մեծ դասամիջոցին հաճույքով վիճում է օր. Վարդուհի Զատիկյանի հետ բարոյախոսության մասին եւ գոհ է թե իր հայացքներից, թե իր խռպոտ ձայնից եւ թե, մանավանդ, օր. Վարդուհուց, որ միշտ համաձայնվում է նրա հետ եւ միշտ ասում է, հայացքը օր. Նվարդին դարձնելով. «Ճի՛շտ է, պ. Բյուզանդ. մարդիկ, մանավանդ կանայք, պետք է առաքինի լինեն: Ես միանգամայն համաձայն եմ Ձեզ հետ, պ. Բյուզանդ»: Եվ պ. Բյուզանդը, գոհ, ժպտադեմ՝ սրրբում է իր նաիրյան մեծ քիթը կարմիր թաշկինակով:

Տալիս է զանգը, եւ ուսուցիչ-ուսուցչուհիները, դանդաղ, տեղերից հազիվ բարձրանալով, նորից գնում են դասարանները՝ պարապմունքները շարունակելու:

Երբ օր. Նվարդը մտնում է դասարան, աշակերտներից ամենաչարը եւ ամենահերոսը, որ ընկերների կողմից հարգվում է որպես կատարյալ տղամարդ -շիլ, դեղնած աչքերով Միսակ Հովհաննիսյանը կամ, ինչպես ընկերներն են ասում՝ Շըլդոն, կանգնած է լինում գրասեղանի կամ նույնիսկ ուսուցչի սեղանի վրա. դասարանում աղմուկ է, փոշի, վայրենի, բայց ուրախ հոհոց: «Էլի դու սեղանի վրա ես բարձրացել»,- սուր, խզվող ձայնով ճչում է օր. Նվարդը եւ վրա է վազում Շլդոյին բռնելու: Շլդոն սեղանից սեղան թռչելով հասնում է դասարանի վերին անկյունը եւ մտնում է գրասեղանի տակ:- «Ներողություն, օրիորդ, ներողություն»,-ճչում է այնտեղից Շլդոն: Երեխաներն ավելի են հոհոում, աղմուկը դառնում է անտանելի: «Հանգի՛ստ»,- ձեռքն աթոռին եւ ոտքը հատակին խփելով՝ ճչում է օր. Նվարդը սուր, խեղդվողի ձայնով. դասարանում մի վայրկյան տիրում է բացարձակ լռություն: Օր. Նվարդը մոտենում է ուսուցչական սեղանին եւ վերցնում է քանոնը:-«Դո՛ւրս արի գրասեղանի տակից»,- քանոնը սպառնալի կերպով բարձրացնելով վեր եւ արագ մոտենալով Շլդոյի գրասեղանին՝ ասում է օրիորդը: Բայց դուրս է գալիս այնպես, որ Շլդոն այլեւս այն նստարանի տակից տեղափոխված է լինում արդեն դասարանի հակառակ անկյունում դրած նստարանի տակ: Աշակերտներն ավելի ազատ եւ ավելի ուրախ են սկըսում հոհոալ, օր. Նվարդը հուզմունքից քիչ է մնում ուշաթափվի եւ երբ լացակումած աչքերը բնազդով դռանն է հառում եւ տեսնում է գրասեղանի վրա մեծ, ծուռ տառերով գրված «քաչալ Նվարդ» բառերը -այլեւս չի կարողանում իրեն զսպել եւ արագ մոտենալով ուսուցչական սեղանին՝ թուլացած ընկնում է նրա մոտ դրված նստարանի վրա եւ գլուխը սեղանին դնելով՝ մի փոքրիկ աղջկա նման սկսում է աղիողորմ հեծկլտալ:

Դասարանում տիրում է մեռելային լռություն, որի մեջ օր. Նվարդի խուլ, դառն հեկեկանքները հնչում են ավելի խոր եւ ավելի աղի, այնպես որ նույնիսկ Շլդոն, ազդվելով վայրկյանի լրջությունից, նստում է իր տեղը: Եվ բոլոր աշակերտները մի տեսակ միստիկական դրության մեջ ընկած՝ կամ նայում են վար, իրենց գրասեղանի սեւ տախտակներին, կամ պաղ, անասնական ահով լցված

մանկական աչքերը օրիորդի ցնցվող արմունկներին եւ կարճ մազերին հառած՝ սպասում են ստեղծված կացության վախճանին:

Մի երկու վայրկյան հեծկլտալուց հետո օր. Նվարդը հանկարծ վեր է թռչում տեղից եւ թեթեւ քայլով, գլուխն ու ամբողջ մարմինը տարօրինակ ցնցելով, վազում է դասարանից դուրս: Աշակերտները հասկանում են, որ օր. Նվարդը գնում է ուսուցչանոց, տեսչին կանչելու: «Շլդոյի գլխին տվեք՝ թող քոռանա»,- ասում է մի աշակերտ՝ լռությունը խզելով. «Տեսուչը որ եկավ, բոլորիս կպատժե»,- շարունակում է նրա մոտ նստած ընկերը -նա, որ ամենից շատ էր հռհռում եւ մտքի մեջ նախանձում էր Շլդոյին: Եվ ահա Շլդոյի մոտ նըստած աշակերտը, տասներկու-տասներեք տարեկան Չիլ Մուկուչը ձեռքն արդեն բարձրացնում է վեր, որ իջեցնի Շլդոյի գլխին -բայց դուռը բացվում է հանկարծ, եւ ներս է մտնում պ. Բյուզանդը՝ զայրացած, ահռելի դեմքով, իսկ նրա հետեւից, աչքերը սրբելով, մտնում է օր. Նվարդը -հոգնած ու գունատ:

«Մկրտիչ Կարապետյա՛ն, դո՛ւրս արի»,- ավելի բարձր ձայնով, քան կարելի է ենթադրել, որ ունի պ. Բյուզանդը,- բղավում է պ. Բյուզանդը՝ դեռ ներս չմտած. նա տեսավ Չիլ Մուկուչի բարձրացրած ձեռքը, որ, եթե ինքը մի վայրկյան էլ ուշանար՝ ծանր, պիտի իջներ Շլդոյի գլխին: Գլուխը կախ, խոնարհ՝ վախից դողացող մարմնով ելնում է Չիլ Մուկուչը դուրս: «Միսակ Հովհաննիսյան,- ավելի ահռելի ձայնով կանչում է պ. Բյուզանդը.- դու եւս դուրս արի»: Եվ ահա Շլդոն եւս, գլուխը հոռետեսորեն քորելով, գալիս կանգնում է գրատախտակի մոտ: Դասարանը սարսափ կտրած, չռած աչքերով սպասում է դրության վախճանին:

«Սա՞ էր», - ցույց տալով Շլդոյին՝ հարցնում է պ. Բյուզանդը: Օրիորդը, հուզված, գլխով է անում. չի կարողանում խոսել: «Ա՛ռջ,- վրա պրծնելով բղավում է պ. Բյուզանդը.- Ես քեզ ցույց կտամ. աչքե՛րդ կհանեմ»: Ու փայտե քանոնի ազդեցիկ հարվածներ իջնելով Շլդոյի գլխին՝ արագ շարում է իրար հետեւից գունեղ ածականներ.-«Շա՛շ, հիմա՛ր, իշո՛ւկ, փողոցի՛ թափթփուկ, լի՛րբ, ի՞նչ ասեմ, ի՞նչ ասեմ, ի՞նչ ասեմ»,- էլի ու էլի. մի զարկը -մի ածական: Հետո հասնում է Չիլ Մուկուչին. նա էլ, իր հերթին զանազան գեղարվեստական ածականներ ստանալով եւ գլխի վրա նրանց քանակը հաշվելով, սկսում է լաց լինել բարձրաձայն, այնպիսի ահռելի մի լացով, որ ձայնը հասնում է մինչեւ մոտակա

փողոցը: «Ես դուրս կանեմ սրանց, օր. Նվարդ,- ասում է պ. Բյուզանդը՝ պարտականության առաջին մասը վերջացնելով,- ներողություն եմ խնդրում, որ մինչեւ հիմա մնացել են դպրոցում»: «Թող էլի մնան, պ. Բյուզանդ,- ողբերգական ձայնով ու պսպղուն, գոհ աչքերը տեսչի դեմքին հառած -խնդրում է օր. Նվարդը.- ինչպե՞ս կարելի է դուրս անել երեխաներին. դա հակամանկավարժական է եւ անվայել քաղաքակիրթ ուսուցչին»,- մտքում մտածում է նա, բայց վախենում է իր այդ միտքը բարձրաձայն արտահայտել պ. Բյուզանդին: Բայց անընկճելի պ. Բյուզանդը, հրամայելով պատժված աշակերտներին իսկույն տուն գնալ եւ ծնողներին կանչել, առանց պատասխանելու ելնում է դուրս: Աշակերտները ոտքի են կանգնում եւ մնում են կանգնած, մինչեւ օր. Նվարդը դրամատիկական ձայնով ասում է. «Նստեցե՛ք»: «Բաց արեք գրքերդ»,-ասում է մի վայրկյան հետո, ճակատը շփելով, օր. Նվարդը: «Մարտիրոսյան, կարդա՛»,- ասում է նա: Եվ դասն սկսվում է նահիրյան դպրոցում՝ տխուր, անհետաքրքիր, իսկ օր. Նվարդի գլուխն սկսում է նվալ, եւ մտքերը նրա փոքրիկ գլխում սկսում են պաղ, միապաղաղ հորանջել:

Արեւը զենիթից սկսում է իջնել, ժամը մոտենում է երեքին, իսկ Ղահվեճի Սեթոն դեռ ոչ մի մսխալ սուրճ չի կարողացել ծախել: «Թարս օր է, գիշերը թարս եմ քնացեր»,- մտածում է նա խանութի առաջը նստած եւ ծխախոտ է ոլորում, որ քունը չտանի: Օրորվելով, ուսը տարօրինակ ցնցելով՝ մոտենում է նրան Աբոմարշը, որ ձանձրույթից փակել է խանութը եւ դռան ապակուն, ինչպես այդ ընդունված է Եվրոպայում, փակցրել է սպիտակ մի թուղթ՝ վրան գրված «Փակ է. գնացել եմ ճաշի»: Այդ քաղաքավարի արարքով նա միանգամից կարողացել է հասնել երկու նպատակի. նախ, որ իր խանութը եվրոպական խանութ է իր բոլոր կողմերով, երկրորդ՝ որ ինքը, որպես իսկական եվրոպացի, ճաշում է ժամը չորսին: Թեկուզ ոչ մի կոպեկի ապրանք չի կարողացել ծախել պ. Աբոմարշը, բայց գոհ է, որ հնարավորություն ունի եւ գիտե եվրոպացի լինել: «Տո՛, գռեհիկ գոմեշ, ի՞նչ ես արեւի տակ նստե, էրթանք թուղթ խաղանք»,-ասում է նա, մոտենալով Ղահվեճի Սեթոյին: «Նարդի կուզես նե- կխաղամ, թուղթ չեմ խաղար»,- պատասխանում է ղահվեճին եւ քանի որ Աբոմարշը չի հակաճառում՝ նա նույնպես փակում է խանութը, բայց թուղթ չի փակցնում դռանը, որ գնում է ճաշի -եւ երկուսով միասին գնում են Տելեֆոն Սեթոյի՛ սրրճարանը -նարդի խաղալու:

Երբ նրանք, թեւ թեւի տված, ձանձրույթից փրկվածների զոհունակությամբ մտնում են Տելեֆոն Սեթոյի սրճարանը՝ այնտեղ հանդիպում են մի շարք հարեւանների, որոնք նույնպես թուղթ, դոմինո կամ նարդի են խաղում՝ նայած տրամադրության: Դագաղագործ Ենոքը եւ Կինտաուրի Սիմոնը նախընտրել են թուղթը եւ երկուսով «փաստոն» են խաղում ձմերուկի վրա. ով որ տարվի -մի ձմերուկ գնի: Նրանց գլխին հավաքվել են՝ Հաջի Օնիկ Մանուկոֆ էֆենդին, մանրավաճառ Պողոս Կոլոպոտյանը, Կաթոլիկ Սիմոնը, գինեվաճառ Նիկոլ Արզումանովը եւ իրենց տաք բացականչություններով մասնակցում են նրանց խաղին ու մի առանձին հետաքրքրության մթնոլորտ են ստեղծում Եգոռի սրճարանում: Նրանց այդ ոգեւորված հավաքույթը տեսնելով՝ Ղահվեճի Սեթոն եւ պ. Աբոմարշը եւս, մոռանալով իրենց նարդի խաղալու ցանկությունը, միանում են նրանց:

Երբ օրն սկսում է կամաց-կամաց մթնել՝ հերթով, իրար ետեւից, սկսում են փակվել Լորիս-Մելիքյան փողոցի ցածլիկ խանութները: Ամենից առաջ դագաղագործ Ենոք Կարապետյանն է փակում իր խանութը ներսից եւ ինքը մնում է խանութում: Այդ հարգելի նահրցին տուն չունենալու պատճառով քնում է իր գործատեղում, իր շինած դագաղներից մեկում. այդ բանն ամբողջ քաղաքը գիտե եւ ահա հենց այդ է պատճառը, որ նրան քաղաքում անվանում են Մեռելի Ենոք, իսկ երեխաները վախենում են նրանից եւ չեն սիրում անցնել դագաղագործի խանութի առաջից: Երկրորդ խանութպանը Ղահվեճի Սեթոն է, որ փակում է իր խանութը եւ նույնպես ընտանիք չունենալու պատճառով՝ գնում է քաղաքային այգի զբոսնելու եւ հարսնացու ընտրելու: Հետո Հաջի Օնիկ էֆենդի Մանուկոֆն է իր խանութը փակում -եւ ահա նրանից հետո բոլորը, իրար հետեւից խանութները փակելով, գնում են՝ որը տուն, որը քաղաքային այգի, որն էլ նորից Տելեֆոն Սեթոյի սրճարանն է գնում, որ երեկոյան հանգիստն այնտեղ վայելե -թղթախաղով կամ ուրիշի խաղին նայելով: Եվ այսպես կամաց-կամաց սկսում է բոլորովին ամայանալ. մութն էլ, անդեմ ու անխորհուրդ, ծույլ, հորանջող պառավի մի նման, իջնում է ու նստում փողոցների վրա եւ տեղ-տեղ տարտամ, վախկոտի աչքերի պես թարթող կրակներն են միայն ենթադրել տալիս, որ այդտեղ դարերից ի վեր ապրում է ու զվարճանում նահրյան մի քաղաք: